# ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ ԱՌԿԱ (ՀԵՌԱԿԱ) ՈՒՍՈՒՑՈՒՄ

## Ընդունելությունը ՀՀ քաղաքացիների համար

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանն իրականացնում է մագիստրոսի կրթական ծրագրով ուսուցում կրթության, մանկավարժության, բանասիրության, լեզվաբանության, քաղաքագիտության, միջոլորտային, լրագրության, զբոսաշրջության, սոցիալական և տեղեկատվական գիտությունների, կառավարման և վարչարարության ոլորտներում:

## Ընդունելության պահանջները.

ՀՀ քաղաքացիների՝ ԲՊՀ-ի առկա (հեռակա) ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելությունը իրականացվում է՝ ՀՀ Կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 6-ի N 1193-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման» կարգի համաձայն:

ԲՊՀ-ի մագիստրատուրայի առկա (հեռակա) ուսուցմամբ կրթական ծրագրով ընդունվելու համար դիմորդները դիմում-հայտի հետ ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

- անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը և պատճենը (անձնագիր/ նույնականացման քարտ/ ծննդյան վկայական),
- բակալավրի որակավորման դիպլոմի և միջուկի բնօրինակները և պատճենները,
- 4 լուսանկար (3x4),
- զինվորական գրքույկի բնօրինակն ու պատճեն (առկայության դեպքում)
- վճարման անդորրագիր՝ 2000 ՀՀ դրամի չափով (հաշվեհամար՝ «ԱյԴի բանկ» Հ/Հ 11815000773000)
- տեղեկանք ՄՈԳ-ի վերաբերյալ